



վարձը ստանում է նրանցից միայն կայի ժամանակ 1 լիտր ցորեն և 1 լիտր գարի ամեն մի մարդուց: Եթէ պատահում է, որ հողաների տէրերը հիւրեր ունեն, նրանք ընդունվում են նոյն իսկ այդ ժողովրդի մէջ և իր հիւրերին հաց ու տացնելու ժամանակ «հողախի» տէրը ստիպված է լինում այդ իր «հողախում» յաճախողներին շատերին հացի հրավերել: Այդ «խալի» հողաները շինված են այսպէս. նրանց մէջ կայ մի անցք, որի այս և այն կողմը մի արշին բարձրութեամբ քարից և փայտից շինված են «խալտի» ձևի հետարաններ (սաքուներ), որոնց վրա խառն ի խառն նստում է ժողովուրդը: Անցքը, որը ունի 1 1/2 կամ 2 արշին լայնութիւն, իր վերի կողմնու ունի հողախի «բուխար» այդտեղ վառվում է ածխաբլէ «հողան» տաքացնելու և թէ ժողովրդի «չիբուխներին» կրակ մատակարարելու համար Հողաներ յաճախող ժողովրդի մեծամասնութիւնը ձեռներին միշտ կրում են «չիբուխներ», որոնցով «մախրակա» ասված թուփուկից անդադար ծխելով, «հողախի» օդը լցնում են սնունդով զուրկ ծխով, որի մէջ եկտորը երկու քաշ անգամ չէ կարող շունչ քաշել: Այդ «հողաներում» համարձակ կարող են մտնել և խօսել մինչև անգամ օտարները և անձանութները: Գլխաւոր կարելի է կորակացնել, թէ առհասարակ որ ստորհասնի վատ դրութեան մէջ է այս գիւղացիների մարդատիրութիւնը, և որքան որդարմալի հասկացողութիւն ունեն սրանք ընդհանրապէս մտքորոշեան և առողջամտութեան մասին:

Ամբողջ ձմեռը մեր գիւղացիք անպատեղութեան մի օր և է ձիւղով, ինչպէս ասեցինք, չեն զբաղվում: Նրանք չեն էլ փորձում, օգտու քաղելով հարան ուրիշ աղբերից, լաւացնելու իրանց երկրագործական գործիքները և իրանց հաց ուտող արհեստները: Այս կողմի մեր գիւղացիների հարեան մայրականները, որոնք աները աչքի են ընկնում մաքրութեամբ, ձմեռը պարսպում են սպառազանութեամբ, և մեծ օգուտ են ստանում: Մալահաները չորս ձի լծած ֆուրքոնում բեռնում են 100—120 պոսը և քրէնով տեղափոխելով օրինակ, Երևանից Թիֆլիս, առնում են ամեն մի պոսիկ 50—60 կոպէկ քրէն, նոյնը անում են և վերադարձին: Այդ գործողութիւնը տեսնու է ընդամենը 15 օր, այն ինչ գիւղացի հայերը եթէ կամենում են նոյնպէս քրէնով ապրանք կրել, լծում են չորս եղջեր ծանր սայլը, երկու մարդով բեռնում են ընդամենը 40—50 պոսը բեռը, և այն էլ հազիւ թէ կարողանում են երկար ժամանակամիջոցում տեղ հասցնել: Այդ գործում տեղացի գիւղացիները նոյն իսկ հեռու օր մրցութիւն չեն կարողանում անել միւսների

հետ: Եւ այդ պատճառով երկար ձմեռը մեր գիւղացիների համար համարեա ապարդիւն է անցնում. ուստի և նրանք ստիպված են դարձնել և ամառը կաշուց դուրս գալ ձմեռայ պաշարը հայթայթելու համար:

**ՆԱՍՏԱԿ ԽՐԱՎԱԳՐԻՆ**

Բազու, յունիսի 15-ին  
Մարդասիրական ընկերութեան խորհուրդը ուղարկելով այս փոքրիկ նամակը՝ խոնարհաբար խնդրում է ապագրել նրան «Մշակի» առաջիկայ համարներից մէկում:

Մարդասիրական ընկերութիւնը մեծ բաղաւորութիւն համարեց իրան ներկայ թեւականիս մայիսի 21-ին տօնելու իր հիմնադրութեան 25-ամեայ յօբելեանը: Եւ հայ հասարակութեան մասնու մասը՝ իր նրբին մօտ ընդունելով ընկերութեան վեճ գաղափարը՝ շտապել էր շնորհաւորելու իր ժամանակին նրա քսան և հինգամեակը թէ հեռագիրներով և թէ ուղիղ ձեռքով: Անկարող լինելով իւրաքանչիւրին պատասխանելու անանձին-ասանձին նամակով՝ ընկերութեան խորհուրդը քաղցր պարտականութիւն է համարում իրան ձեր լրագրի միջոցով յայտնելու իր խորին և լիարժեք շնորհակալութիւնը այն բոլոր կրթական հաստատութիւնների և մասնաւոր անձանց, որոնք բարեհաճել էին շնորհաւորելու ընկերութեան 25-ամեակը՝ ցանկալով նրան յարատև և արդիւնաւետ գործունէութիւն հայկական հիւանդի սպարկուան: Սրա հետ միասին խորհուրդը յայտնում է իր անկեղծ շնորհակալութիւնը նաև նորին գերազանցութիւն Բագուի քաղաքապետին՝ Գեորգի Չիլոսին, յօբելեանի կարգադրել յանձնառուովին, պ. Կարա-Մուրադին իր երգիցիլ խմբով և մի քանի յարգելի տիկիներին և օրվորներին՝ իրանց ցոյց տաւած գործունէութեան համար թէ յօբելեանը կարելոյն չափ հանդիսաւոր անելու և թէ երեկոյան քաղաքային այգում շքեղ զբօսանք սարքելու համար, որը բացի հասարակութեան զուարճութիւն պատճառելուց՝ նաև 1,500 բուբուց աւելի զուտ գրամական արդիւնք տուեց ընկերութեանը:

Խորհրդի նախագահ՝ Խր. Անտօնեան

**ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

Մեզ հաղորդում են, որ այս տարի Թիֆլիսի Ներքինիս գլխաւոր վեցերորդ վերջնական գաւառային վկայականով աւարտել են ընդամենը 13 հողեր:

Մեզ հաղորդում են, որ շուտով կը վերջանայ Խորենացու պատմութեան աշխարհաբար թարգմանութեան ապագրութիւնը: Թարգմանութիւնը, ինչպէս յայտնի է, պատկանում է հ. Խորէն Սեփանէին: Գրքի ապագրութեան ծախսը ծածկելու համար թարգմանիչը դիմել է հայոց գրականութեան մէջ սովորական, բայց շատ անպատասխանաբար միջոցի, — այն է բաժանորդագրութեան: Ի նկատի ունենալով այդ հանգամանքը, ցանկալի է, որ գեթ բաժանորդագրութիւնը առաջ գնայ, որպէս զի որքան կարելի է շուտով լոյս տեսնի Խորենացու աշխարհաբար թարգմանութիւնը, որով միայն մեր ընթերցող հասարակութիւնը կարող է ծանօթանալ այդ պատմութեան բովանդակութեան հետ, անկարող լինելով հասկանալու նրա գրաբար — խրթին լեզուն:

Թիֆլիսի բարեկործական ընկերութեան նախագահուհին խնդրում է մեզ ապագրել հետևեալը, որը վերարկում է ապրիլի 23-ին և մայիսի 28—29-ին Ալեքսանդրեան այգում տեղի ունեցած զբօսանքին և վիճակախաղին: Ապրիլի 23-ին, Նախալուզի մանկական ապաստարանի օգտին տուած զբօսանքից արդիւնք ստացվել է 2,967 բուբուլ 65 կոպէկ, ծախս եղել է 1,075 բուբուլ 25 կոպէկ, զուտ արդիւնք մնացել է 1,892 բու. 40 կոպ. Մայիսի 28—29-ին բարեկործական ընկերութեան կայացած ժողովրդական զբօսանքից և վիճակախաղից արդիւնք ստացվել է 3,578 բուբուլ 40 կոպ., ծախս եղել է 1,230 բուբուլ 28 կոպ., իսկ զուտ արդիւնք մնացել է 2,348 12 կոպ.: Ներկայացնելով այդ հաշիւը, նախագահուհին պարտ է համարում անկեղծ շնորհակալութիւն յայտնել զբօսանքին օգնող բոլոր անձանց, «Кавказ», «Մշակ» և «Новое Общество» լրագիրներին խմբագրութիւններին՝ յայտարարութիւնը ձրի ապագրելու համար, և առհասարակ նրանց բոլորին, որոնք նպաստել են զբօսանքին թէ նուէրներով և թէ անձնական օգնութեամբ:

Լուում ենք, որ Հրատարակչական ընկերութիւնը մտադրութիւն ունի ապագրելու պ. Գաղարուս Աղայեանի գրուածների ժողովածուն, և մատչելի դեռով վաճառելու — Համակրելի միտք է այդ:

ԱՍԱԼՏՅԱՆՍ ԵՎ ԵՎ ԳՐՈՒՄ ԵՆ. «Մօտ օրեր» իր խմբի հետ միասին յայտնող էր եկել Ալեքսանդրապոլից երդիչ և նուագածու պ. Երանդ Չիլիկարեան: Չը նայելով որ պ. Չիլիկարեան երկու աչքով էլ կոյր է, այնու ա-

մենայնիւ մեծ աջողութեամբ ջուրակ է անում: Կոյր նուագածուն իր ձիւրքն աւելի բարձր և աւելի օգտակար կայացանելու համար, մտադրվել է իր ընկերներով նուագել և երգել հայ բանաստեղծների աշխարհաբար ընտիր երգերը, փոխանակ այս և այն աշուղի հնացած, անհուն, անխմատ և ձանձրալի երգերը: Եւ այսպէս պ. Չիլիկարեանց իր տեսակի մէջ առաջինն է, որ հանդէս է գալիս իր խմբով ժողովրդականութիւն տալու թէ հին, և թէ մեզ ժամանակակից անուանի բանաստեղծների աշխարհաբար երգերին: Սրա խմբին մասնակից են էլի երեք հոգի, որոնք տեղական գործիքների վերա են անում և բացի հայերէնից՝ նուագում և երգում են նաև թուրքաց և պարսկական ամեն տեսակ երգեր և եղանակներ: Պ. Չիլիկարեան իր խմբի հետ միասին մի երկու օր առաջ Ալաշխալից ուղեորվելով դէպի Բաթում, այնտեղից Բուսաստան անցնելով՝ մի քանի ամսից յետոյ վերադառնալու է Թիֆլիս և Թիֆլիսից գնալու է Բագու, ինչպէս և կովկասի ուրիշ հայրենակ սեղերը:

ԳԵՅՈՒՅԱՆՍ ԵՎ ԵՎ ԳՐՈՒՄ ԵՆ. «Այսօր, երեկոյան ժամի 2 3/4-ին պատահեց երկրաշարժ և տեղի 2 վայրկեանս Երկրաշարժի հարածները անհասկանալի պատճառների ապակիների շարժումը նկատելի էր»:

ՇՈՒՇՈՒՑ ԵՎ ԵՎ ԳՐՈՒՄ ԵՆ. «Վերջին օրերում այստեղի հրատարակներ վրա յաճախ է սկսել կռիւ պատահել հայերի և թուրքերի մէջ. այդ կռիւները կարծէք արդէն կօրցնու են իրանց պատահական կերպարանքը: Հարկաւոր է միթէ աւելացնել, որ երկու հարեան աղգելի մէջ այդպիսի երկուութիւն, — անպայման տխրալի է»:

ՇՈՒՇՈՒՑ ԵՎ ԵՎ ԳՐՈՒՄ ԵՆ. «Երեկ, ժամի 2 1/2-ին կէսօրից յետոյ, դժբախտ եղաւ երկրաշարժի ստորերկրային հարուած, որը տեղի մօտ 1/2 քաշէ: Բաւական չեն յորդ անձները, որոնք ահա 6—7 շաբաթ է համարեա թէ ամեն օր տեղում են, այժմս էլ մշուշով է պատած քաղաքը: Յորդ անձները, սարսափելի ցեխը, մշուշը և խոնավութիւնը անտանելի են դարձրել այստեղի կեանքը»:

Բագուի երկուս ուղիղներն տեսուչ պ. Ա. Գալստեան խնդրում է մեզ ապագրել հետևեալը. «Մշակի» ներկայ թեւականի 59 համարում տպագրվեց «Մարդասիրական ընկերութեան 25-ամեայ յօբելեանը» խորագրով մի ընդարձակ յօդ-

գրվել է մեր ժողովրդի սրտի մէջ: Եւ ահա մի այսպիսի անդգնակալ գործիչի, մի առաքինի վարդապետի պատկերը բոլորովին աղաւաղված, հակասական դուրս բերում համար, վիպասան պ. Պերճ Պոսեան, «Մուրճ» ամսագրի յատուկ յանձնարարութեամբ և ամբ գրում է («Ե զըրված, զարմանալի բան, զրված ամիս ու կէսուս — «Մուրճ» № 3, էջ 517), «Ցեցեր» անունով մի գրուած, որ յիշեալ ամսաթիւնովը «վկայ» տխրուածով է յորջորդում:

Ըստ երևույթին, այդ ըստ «Մուրճի» «վկայ», ըստ մեզ պատկզիլ գրուածը նպատակ ունի մերկացնել այն անկեղծ վաշխառուների զարգելի գործերը, որոնք քամում, ջլատում են խեղճ գիւղացուն, բայց այդ լուկ կեղն է. եթէ մի քիչ խորը թախանցէք, կը տեսնէք, որ բուն նպատակը եղել է հետեւեալը, որ սկսվում է ամսագրի 3-րդ համարից:

Ինչպէս յայտնի է, Հայրիկը Վասպուրականի Վարազդ պանդուխտ ունէր մի ժառանգաւորացի դարոյ, որտեղ պատարասում էր աշակերտները: Եւ ահա տեսել Հայրիկի ուսուցչութեան և դաստիարակութեան պատու աշակերտները ինչ տեսակ գործիչներ են հանդիսանում:

Նախ՝ այդ դպրոցում աշակերտները վարձվում էին երեսուն և եօթ տեսակ ձեռագիր կեղծիչ. Հայրիկը գիտէր այդ և պատերից դէթ ի չարն գործ չը դնել (էջ 389):

Երկրորդ՝ այդ աշակերտներին Հայրիկը ուղարկում է ուսուցչութիւն անելու Հայաստան և Արարատեան աշխարհը իր մտքերը բարոյղելու (էջ 377), կամ «Արժուի-Հայրիկին ձեռներ միայն վսեմ գաղափարներ և լուսաւորութիւն կը տարածեն, որ կերթան» (387): Եւ ահա ինչ տեսակ վսեմ գաղափարներ և լուսաւորութիւն են տարածում: Նախ տեսնենք ինչ կերպարանքով են

մտնում ժողովրդի մէջ: Հայրիկից և ուրիշ առաջնորդներից յանձնարարական թղթեր են առնում, կանգակներ, որը ձրի, որը դրամով, և եթէ անհնար չէ լինում ձեռք բերել այդ կոնդակները, իրանք շինում են կեղծը. լցնում են իրանց ծաւալները զանազան սուտ-սուտ փէշտներով, Տէրսկամ օրդու կոնդակներով, մասնահարեան լուսաւորութիւններով, սրբի պատկերներով (էջ 387) և այդպէս ընկնում ճանապարհ ու դրանցով խառում խեղճ, աւանի ժողովուրդը, փող կարգում: Եթէ մի տեղ հարկաւոր է լինում հայոյնի նոյն իսկ իրանց բարեբար Հայրիկին, իսկոյն նրա դէմ թափում են լուսանք, հայոյնաք (էջ 386), մի ուրիշ տեղ, դարձեալ փող կարգելու համար, նրանք հայոյնում են և իրանց կօնքը, ձեռնում են պապին երկրպագու և ջերմուտանը կաթօլիկ (էջ 911) և այդպէս շրջելով գիւղերը, քաղաքները, մտնում են Արարատեան աշխարհը լուսաւորութիւն տարածելու:

Երրորդ՝ մտնում են գիւղը և իրանց ձեռնում են ուխտաւոր, կուսակրօնութեան նուիրված, դիմում են ուղղակի եկեղեցիներ, այդտեղ արտասուքով աղօթում, սուտ, կեղծ, բարեպաշտական ձեւերով գրաւում միամիտ ժողովուրդը, ուսուցչի կամ գրագրի պաշտօն ստանում և չէ քաշում երեք տարի, այդ ճղրտած շորերով, անկօշիկ, անկօպէկ կեղծ առաքեալները դառնում են ընտանիքի, տան, այգու և հարստութեան, այն է 3,000 նաղդ մանթի տէր (էջ 384):

Չորրորդ՝ այդ տեսակ բարեկեցութեան հասնելու համար, Հայրիկի առաքեալները ամեն մի շոյ գործ են գնում. շինում են կեղծ մուրհակներ, կեղծում են օտարներ ձեռագիրը և կիլիքը, աղաւաղում են կեղծ համալսականների, դոկտորների միջոցով գողերին, աւաղակներին, մարդապաններին, պարագում են վաշխառու-

թեամբ, կեղեցում, հարստահարում են խեղճ ժողովուրդը և երբ նրանց վտանգ է սպառնում, չեն վարանում մինչև անգամ անխնայ կերպով լքանել տուն, տեղ, կին, զուտ և փողերը վեր առնելով փախչել և վերադառնալ Վան, որտեղ նրանք ամուսնանում են երկրորդ անգամ և ծիծաղում Արարատեան հայրի միամտութեան վրա:

Հինգերորդ՝ Հայրիկի աշակերտներն պատկերը հետեւեալ կերպով է արտայայտում Գնթուտու յիշատակարանի մէջ. «Վան, ըստ Խորենացուն՝ Կասանանք քաջաց զէնս իւրեանց, որքան հատանեն, այնքան ունին»: «Մեղի համար այս երկիր օրպէս և սիրելի, իբրև մայրնի տեսակ, բայց ապարդիւն, հոյն առաջ՝ զբամ սուղ, հարստութիւն՝ կենաց նպատակ, հայրենասիրութիւն՝ աւնոր ուղին հարթող պատրուակ» (էջ 910), և խուրդի բերանով հետեւեալը. «Չըր ճամփին փուշ ու տատաչ դառնար, էս աշխարհը չը մտնէր. էլ գեղ, տուն, օջաղ, ընտանիք թողցնէր, որ չը փշացնէր, ամեն տեղ հինն արեգակ շուտ տուէր. իրդերը ձեր ձեռնոյն ընչաք էս օր էլ արնի մէջ լեղ ա տայիս, Աշտարակ՝ հէրը որդուց հանեցիք, բաժան բաժանութիւն ցցեցիք, երեխանցն իրար հետ թխնամացրիք, Գամարու՝ աղքատների բերանից սուտ-սուտ սանաղներ շինեցիք՝ հարուստներին ծախեցիք, Մարգարի գիւղուրը միամիտ հարսներին ճանգեցիք, աղջիկ փախցրիք, գեղն աշխարհը, փաթաթուել խեղճ ժողովուրդի բուղաղին, հուի էք տուել, աչքերը՝ գազաթն էք թռցրել, հլա էլի խօսում ես...» (էջ 387) և

այն և այն...  
Ահա Հայրիկի դպրոցի աշակերտների պատկերը  
Հարցնում ենք, այդ պատկերի մէջ կայ մարդկային կերպարանքի նմանութիւն, կայ մի ամենուրեք բարոյական յատկութիւն: Ինչով չեն այդ աշակերտները իրենախի Լոյսայի արժանաւոր սաները, ճիւղախոսութեան հարագատ պատուները: Եւ ահա այդ բարոյական հրէշն երբ իրի մե անի ձեռքի պտուղն են և նա:  
Մենք չենք վիճում, որ այդ տեսակ տիպեր չը կան մեր կեանքի մէջ, բայց պնդել որ, անպատճառ, այդ տեսակ տիպերը Հայրիկի աշակերտներն են, այդ ուր այնպիսի տուութիւն է, որ միայն դիմամբ հոգով կուրացածները կարող են հնարել:  
Եւ ինչ նպատակ, խորհուրդ ունի մի այսպիսի ժամանակ, երբ Հայրիկի անձնաւորութեան հետ կապված են շատ տեսակ գաղափարներ, բարոյական շատ հարցեր, այդ տեսակ յարձակումներ անել նրա դէմ: Գոնէ այդ յարձակումները ուղիղ լինէին, գոնէ ճշմարտաման լինէին, հիմնված լինէին փաստերի վրա, և այն ժամանակ, մենք Հայրիկի համակրողներն, առաջինը կը խոստովանէք տխուր եղելութիւնը...  
Ի հարկէ, ոչ «Մուրճը» և ոչ պ. Պոսեան զրանով ոչինչ ապացուցանել, ոչ զքնն համոզել չեն կարող. նրանք միայն մի բան ապացուցին, այդ էլ ամենափառաւոր կերպով որ ոչ թէ մեր ժողովուրդը, այլ նոյն իսկ մեր գործիչներից այն անձինք, որոնք հրատարակաւսու և զորդ լինելու յաւակնութիւնն ունեն, զուրկ են իդէալներ ունենալու շնորհից և բաղաձայնութեան հասունութեան ամենախորք նշույլը...  
Հ. Առաքելեան



շատ սերբեր և չերիտոգորյններ և սլավոնական բա-  
րեգործական ընկերութեան անդամները:

10-ի 16-ը, 16 յունիսի Այսօր թագուհին թող-  
տուութիւն տուց: Ուէլսի դրօշ մեծ ազգայն իշ-  
խանուհի Լուիզային նշանադրել կոմս Ֆէյերի  
հետ:

Բերլին, 16 յունիսի Թագաժառանգ Յէսարե-  
վիլը այսօր, առաւօտեան 9 ժամին հասաւ Սի-  
լեզեան երկաթուղու կայարանը, ուր նրան դի-  
մաւորեցին առաջ դեպատուութեան անդամները:  
Նախաձայնիկը յետոյ Նորին Բարձրութիւնը ժամը  
10-ին շարունակեց իր ճանապարհը:

Վիէննա, 16 յունիսի Ունդարական պատգա-  
մաւորները ժողովը երկ քաղաքացաւ արտաքին  
գործերով Այն կարծիքը յայտնեցաւ, որ Աւստ-  
րիան պէտք է պաշտպանի Միւրան թագաւորին,  
և որ եթէ Բուրնիան և Սերբիան պատկանէին  
երեքստեան դաշնակցութեան, այն ժամա-  
նակ նրանք կապիված կը պահէին երկու հա-  
րիւր հազարից բազմացած ուսաց զօրախումբը:

Մինչդեռ այժմ նոյն թիւով աւստրիական զօրա-  
խումբն է կապիված Արքիառիական և Սե ծո-  
վերի մէջ եղած տարածութեան վրա աւստրիա-  
կան ազգայնութիւնը ոչնչացրած է միանգամից:  
Շօշափիկը Բուլղարիայում եղած իրերի այժմեան  
գրութիւնը ճանաչելու հարցը կամ կարծիքի վճառ-  
կանապէս հերքեց Աւստրիայում պատերազմական  
դիտարարութիւնները զտութիւն ունենալը: «Մին-  
չև անգամ ամենապատգամաւոր գրութիւնը,—  
ասեց կարծիքը,—կարելի է լինում դուրս պրծնել  
առանց պատերազմի: Նա ինչդեռ չը յարացա-  
նել բուլղարական հարցը, և իրան թողնել ընտրե-  
լու այն ժամանակը, երբ յարմար կը լինի ա-  
ջակցութիւն ցոյց տալ Բուլղարիային, յայտնելով,  
որ գուցէ կարելի կը լինէր կազմակերպել եւրո-  
պական կոնգրէս, պետութիւններին մէջ եղած վի-  
ճակ հարցերը լուծելու համար:

Պետերբուրգ, 17 յունիսի «Гражданин» լը-  
րագիրը հաղորդում է, որ թագաւորական երկա-  
թուղիների ժամանակաւոր վարչութեան անդամ-  
ները այս ամառ քննելու են այն բոլոր երկա-  
թուղային ճանապարհները, որոնք կառավարու-  
թեան ձեռքում են:

Պարիզ, 17 յունիսի Պատգամաւորների ժողո-  
վը ընդունեց այն օրինակները, որով առաջարկ-  
վում է բաց թողնել նոր օրէկայիտներ՝ 34 միլի-  
օն ֆրանկի՝ Պանամայի ջրանցքի շինութեան հա-  
մար:

Բրիտն, (Մորալիս) 17 յունիսի Բանտերների  
շարժումը ծանր կերպարանք է ընդունում:  
Վիէննա, 17 յունիսի Բազմապիկցի ստա-  
ցած տեղեկութիւններին նայելով, կոստովայի  
տոնախմբութիւնը, որին ներկայ էր 10 հազար  
մարդ, կարգին անցաւ. առաւօտեան հոգեհանգիստ  
կատարեցաւ, իսկ կէսօրից յետոյ տեղի ունեցաւ  
ժողովրդական դրօսանք. իշխանութիւնը արգելեց  
աւելի լայն կերպարանք տալ տոնախմբութեանը:  
Նօվի-Սարէ կոչված տեղից հաղորդում են, որ  
ժանդարները բռնել էին քաղաքի դարպասները  
և չէին թողնում անցնելու մօտ 500 սալեբրին  
ուխտաւորներով, որոնք գնում էին Բալանիցա:  
Բանտիայի սահմանադրութիւնը միանգամայն բռնված  
էր:

Պետերբուրգ, 19 յունիսի Թագաժառանգ Յե-  
ցարեվիլը երկ քաղաքացաւ արտասահմանից:  
Թուրքեստանի կաղիմենայա պալատայի կառավա-  
րիչ Խալիլով, իր խնդրով համաձայն, արձակված  
է պաշտօնից, իսկ նրա տեղը նշանակված է գնե-  
րալ-նահանգապետութեան գիւրանատան կառավա-  
րիչ Մորզովիտով:

Կրոնցեվսկ, 18 յունիսի Երէկ առաւօտեան  
քաղաքը սուգի դրօշակները փոխարէն, զարդա-  
վեց ազգային դրօշակներով: Մինչև կէսօր տեղի  
ունեցաւ վառօդի գործարանի հիմնարկութիւնը:  
Առաջին բարձր թագաւորը դրեց: Կէսօրից յետոյ  
կայացաւ կոնցերտ, կոստովայի արձանի համար  
փող հաւաքելու նպատակով: Ժամը 7-ին ճաշ  
արկեցաւ, որին ներկայ էին թագաւորը, բարձր  
հոգեւորականութիւնը, աստիճանաւորները և օտար  
հիւրերը: Ամենից առաջ Սերբիայի հին մայրաքա-  
ղաքի քաղաքապետը առաջարկեց թագաւորի  
կենացը, որի հետ միասին ցանկութիւն յայտնեց,  
որ Ալէքսանդր թագաւորի օրով վերականգնվէր  
հին սերբիական թագաւորութեան շրջանը: Թա-  
գաւորի հրամանով պատասխան տուց զինեղալ

Գրուիլ Նա ասեց, որ սերբիական ազգի աւան-  
դական ցանկութիւնը կարող է իրագործվել այն  
ժամանակ, երբ դէպի գահը կը լինի անսահման  
սէր, և ժողովրդի մէջ էլ համաձայնութիւն և հա-  
մերաշխութիւն: Օտար հիւրերի կողմից կենաց  
առաջարկեց «Times» լրագրի թղթակիցը, իսկ  
ուս հիւրերի կողմից խօսեց սրբօրէն կու-  
րախօսիկի, որը ցանկացաւ սերբիացիների միու-  
թիւն և առաջադիմութիւն, իսկ թագաւորին՝ ոյժ  
և փառք: Այդ կենացը ընդունվեցաւ հանդիսաւոր  
կերպով, և ներկայ եղողների պահանջմամբ նուա-  
պախուսեց հնչեցրեց ուսաց հիմնը, որի ժամա-  
նակ հիւրերը ոտի կանգնեցին, որից յետոյ թըն-  
դաց «կեցցէ». ժամը 10-ին տեղի ունեցաւ կե-  
րօնակեր գնացք դէպի պալատը. կարգը օրինակե-  
լի էր:

Տրուսէնի, 18 յունիսի Այսօր առաւօտեան,  
թնդանութիւնի օրտան ժամանակ թագաւորը ա-  
տիճանաւորների հետ միասին կրօնական գնաց  
Լիւբուստինին հին վանքը: Այստեղ թագուհի Մի-  
լիցայի՝ կոստովայում սպանված Լազար թագա-  
ւորի ամուսնու դամբարանի վրա միաբարձրեց  
հոգեհանգիստ կատարեց: Թագաւորը դամբարանի  
վրա պսակ դրեց: Յետոյ վանքի մօտեցում տե-  
ղի ունեցաւ ժողովրդական դրօսանք: Արդարեւ-  
կութիւնը դիմաւորեց թագաւորին բերկրութեամբ:

Պետերբուրգ, 19 յունիսի Երէկ առաւօտեան  
Նոյա կայսերական Մեծօթիւնները թագաւոր  
կայսրը և թագուհի կայսրուհին յունաց թագա-  
ւոր, Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչի,  
Մեծ Իշխանուհի Կաթիլա Ալէքսանդրովնայի, է-  
ղիմբուրգեան դրօսուհու, յունաց արքայորդու և  
արքայադստեր և Օլդենբուրգեան պրինցի հետ  
միասին ճանապարհ ընկան դէպի ֆինլանդական  
կղզիները:

Պարիզ, 19 յունիսի շաւտապանում են, որ  
այն ղեկուցման մէջ, որ կանի հինգըթի ղլխա-  
ւոր պրօկուրօրը, պարունակվում են ծանր մեղա-  
դրանքներ Բուլանիզի դէմ և որ նրան դատի են-  
թարկելը անկասկածելի է համարվում:

Կրուսէվո, 19 յունիսի Այսօր Ալէքսանդր թա-  
գաւորը հանդիսաւոր կերպով մտաւ Կրաւէլո:  
Առաւօտեան թագաւորը այցելեց Բէլիմարովիչ  
խնամակիր կալուածքը: Վտոր կը հասնի այս-  
տեղ ուսուսի ներկայացուցիչը: Արտոջ ճանա-  
պարհի վրա հանդիսաւոր յոյներ են պատրաստ-  
վում: Սոյաում են թագաւորական կառքերին և  
պատաւոր պահակի գաւառ:

Ս. Պետերբուրգի ԲՈՐԱՍ  
Յունիսի 16-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արծեւ	97 ր. 15 >
Բերլինի վրա 100 մարկ	47 > 20 >
Փարիզի վրա 100 ֆրանկ	38 > 35 >
Ուկի արծեւ	7 > 74 >
Մարսայի կուպոններ	155 >
Արծաթ	1 > 13 >
Բորսայի գլխավորներ	5 3/4 > 6 3/4 >
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	99 > 12 >
— — — — — 2-րդ —	99 > — >
— — — — — 3-րդ —	98 > 62 >
— — — — — 4-րդ —	99 > — >
— — — — — 5-րդ —	98 > 87 >
— — — — — 6-րդ —	98 > 62 >
Նոր 4% — — — — —	83 > 50 >
Արեւելեան 5% վոխաւոր 1-ին շրջ.	99 > — >
— — — — — 2-րդ —	98 > 75 >
— — — — — 3-րդ —	98 > 62 >
Ներքին 5% առաջին փոխաւոր	271 > — >
— — — — — երկրորդ —	245 > — >
5 1/2% բնաւա.	102 > 75 >
Ոսկեայ բնաւա.	173 > — >
Եօթերորդ կոնսոլիդ. փոխաւ.	140 > 25 >
Նոր կրկնաբաշխում բնաւա.	99 > 25 >
5% զբաւակաւ թղթեր կալուած.	— > — >
փոխ. կրեդ. ընկ. մտա.	139 > 25 >
— — — — — թղթաւ.	93 > — >
Գրաւ. թղ. Ազն. բանկի	98 > — >
Գլխավոր բանկի	102 > 25 >
6% զբաւ. թղ. Թիֆլիսի	27 և 43 ա. — > — >
— — — — — Բուլղարիայի-18 և 43 ա.	— > — >
Ս. Պետերբուրգի քաղաքային օրի- գացիաներ	94 > 87 >
Մոսկովայի քաղաք. օրիգացիաներ	94 > — >
Եղևայի — — — — —	94 > 87 >
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրի.	— > — >
Ս. Պետերբուրգի բորսայի-տրամադրութիւնը հանդարտ է:	— > — >

Ժամանակաւոր Խաղաղի Թ. ՏԵՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆՑ  
Հրատարակիչ ԳՐԻԳՈՐ ԱՄՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԹԻՖԼԻՍԻ ԱԶՆԻԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՆԿԻ ԹԱՏՐՈՆԻՄ  
Կիրակի, յունիսի 25-ին  
Պ. ՊԱՐՈՆ-ՍԱՐԳՍԵԱՆ,  
ժամանակցութեամբ երգիչ պ. ԱՄԻՐՁԱՆԵԱՆԻ, օր. Վարդուհու, ա. Զարէլի, պ. պ. Աղայեանի, Մի-  
րազեանի, Շովակի և այլոց կը ներկայացնէ

**ՄԱՆԿԱԿԱՆ ԲՈՒՇԿ**  
Դրամ 5 արարուածով, հեղ. Ա. Բորժօնի Ազնեւերի  
Ներկայացման վերջում կը լինի զուէշա.—պ. Ամիրջանեան կերպէ, պ. Միրազեան կը պատ-  
մէ, պ. Ամիրջանեան կրկին կերպէ և պ. Աղայեան կը կարգաւ Սկիզբն է ճիշդ 8 1/2 ժամին Տոմ-  
սակները վարորդը թէ ներկայացման օրը կարելի է ստանալ կոստայում Տեղերը գինը սովորական  
է: 1—2

**COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES**  
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.  
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԳՆԱՅՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ  
(ՄԵՍՍՃՐԻ ՄԱՐՏԻՄ)  
Կանոնաւոր և ուղղակի երթեկեղութիւն ՄԱՐՍԵՆԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ  
Ուրբաթ, 23/5 յունիսի ԲԱՌՈՒՄԻՅ զուրս կը գնայ շոգեհաւ «LE CAMBODGE»  
(ԿԱՍՔՈՋ) նաւապետ REMES (ԲԷՄ), մանկով Կ. Պօլիս, Պորտ-ԼաՏօս և Լակադիա:  
Ազնեւները՝ ԲԱՌՈՒՄԻՄ պ. Գ. ԷՍՍԷՆՃԷՐ, իսկ ԹԻՖԼԻՍԻՄ ԳԵՈՐԳ ԷՆՋՈՒԲԵԱՆ.  
ԷՆՋՈՒԲԵԱՆՑ, իսկ ԲԱԳՈՒԻ մէջ ԳՕԼԳՈՒՍԵ:  
2—2

Մարմնի մասերը, մանաւանդ ոտների մասերը  
փոխելուց պահպանող փոշի

**ԳԱԼՄԱՆԻՆ**  
Ճանաչում է ղեկավարում 4-րդ դարի սերունդի մօտ  
Եւրոպայի նշանաւոր քաղաքներում և կայսրու-  
թեան բոլոր քաղաքներում ԳԼԽԱՌՈՐ ՊԱՆՏՍ  
գտնվում է ՎԱՐՇՕՎԱՑՈՒՄ, հնարողը, ղեկավար  
տիրոջ, ֆարմացիայի մաղիտար վ. ԿԱՐՊԻՆՍԿԻՆ  
մօտ, Էլէկտրոպոլիս փողոց, № 39. Գալմանի  
մեծ արկը արժէ վարչակալում 50 կ. փաթը  
30 կօպ.

ՊԵՏԻ Է ԶԳՈՒՇԱՆԱԼ ԿԵՂՄՈՒՄՆԵՐԻՅ  
և պահանջել, որ իւրաքանչիւր արկը կրէ փո-  
շու գործածութեան բացատրութիւնը և Փարիզի  
ցուցահանդիսի մեղակները:  
Ա. 24869 1—10 (b)

ՆՈՐ ԳԻՐԻ:  
**ԲԱՐԵՊԱՇՏ ՄԱՐԳԻԿ,**  
Առակ չափահասների համար.  
ԳԵՈՐԳ ԲԱՐԻՈՒԿԱՐԱՆԵՐԻ:  
Վաճառվում է կենտրոնական գրաւաճառանոցում:  
ԳԻՆԷ Է 60 ԿՈՊ.  
5—5

**ԱՌԱԶԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԳԱՆՈՑ**  
Բ. ՆԱՍԱՍԱՐԻՆԵՆԻ  
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)  
Հիւանդներին ընդունում են աժեն օր  
**ԱՌԱՌՈՏԵՐԸ**  
ՐՈՒԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց:  
ԿԻՆ-ԲՈՒՇԿ ԽՍԱԿԱՆՑ—11 1/2—12 ժ. կանանց և երեխայոց ց.  
ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—11—12 ժ. աղանջի, կոկորդի, քթի ց. և սիֆիլիսի (վերարուծ. և ատամագալի)  
ԱՐՏԵՄԻՆՎ.—12—1 ժ. երեքարթի, ուրբաթ և կիրակի, կանանց ց.  
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի:  
**ԵՐԵՎԱՆԵՐԸ**  
ԳԱԿՍՄՍԿԻ—5 1/2—7 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.  
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ. ներքին, երեխայոց և ջլային ց. (էլէկտրոտերապիա):  
ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—7—8 ժամ.  
Հիւանդանոցում են մահկաբաւ ձեռքի ԵՐԻՆԱՆԵԱՆ և ԱՐՏԱԳԻՆ:  
Վճար—50 կ.: Համախորհրդի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ:  
Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ՐՈՒԿՈՎՍԿԻ

**ԱԼԲԵՐՏԻ ՄԱԳԱՋԻՆՈՒՄ**  
(Ճողովարանին կից)  
Ստացված են մեծ քանակութեամբ ՓՈՒՔՍԵՐ ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ, վերջին  
կատարելադրված միտեմաների համեմատ, պուլիթրիզատորով և առանց դրան ԳՆԵՐԸ  
շատ չափաւոր են, և մատչելի ամենքի համար:  
7—8

**ՄՕՍԿՎԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂ**  
ամառային ամիսներին Թիֆլիսում գտնվելով, ցանկանում է մասնաւոր դասեր ունենալ գիմնազիա-  
կան առարկաներից: Համաձայն է թէ պատրաստել աշակերտներ և թէ գիմնազիայի աշակերտներ  
հետ կրկնութիւններ անել: Հասցէն. Куки. Семеновский переулокъ, домъ Картвелова № 2  
5—5